



# Հովհաննես Թումանյան

## Խրիւնյան Հայրիկի օրերից մինը

Խրիւնյան Հայրիկը Թիֆլիս գտնված ժամանակ մի օր կանչել էր սովորականի նման գրույց անելու, թե իր գրած ոտանավորները կարդալու: Պետք է ասեն, որ շատ էր սիրում ոտ<անավոր> գրելը և իրեն նշանավոր բանաստեղծ էր համարում:

Գիշերները քունս չի տաներ, ասում էր, սենյակում կշրջեմ, կծխեմ ու կգրեմ:

Մի պայծառ, գեղեցիկ առավոտ էր: Մտա Թիֆլիսի առաջնորդարանը: Նախասենյակում մի խումբ խնդրատուներ էին կանգնած: Նրանց միջից մի ծերունի տիրացու, որ ճանաչում էր ինձ, առաջս կտրեց, խնդրեց, որ միջնորդեմ կաթողիկոսին իրեն օգնելու: Խոստացա . ներս գնացի: Արևը լցվել էր սենյակը, ու Հայրիկը Աստվածաշունչի նահապետներից մեկի նման գահավորակին թիկնած ծխում էր: Քեֆը լավ էր, ու դենքն էլ պայծառ՝ օրվա նման: Զգիտեմ ինչու քեֆի լավ ժամանակները նա սիրում էր ետ դառնալ, խոսել իր երիտասարդ ժամանակից, անցած օրերից, Վարազա կյանքից: Սիրում, սրտաշարժ պատմություններ էր անում զանազան մարդկանցից, որոնցից ոչ մեկից ես ոչ մի տեղեկություն չունեի: Ես ինչքան ձանձրույթով էի լսում նրա ոտանավորները, այնքան և ավելի հետաքրքրությամբ լսում էի նրա տաղանդավոր գրույցները:

Պատմում էր, պատմում ու վերջը տխրությամբ ավելացնում . «Ո՛վ գիտի, հիմա մեռեր են ամենքը...»: Բայց ավելի շատ ծիծաղաշարժ բաներ էր պատմում ու այնպես դուրեկան, այնպես սրտալի ծիծաղում, որ միայն Հայրիկին էր հատուկ:

Այն օրը, որ ասում եմ, շատ զվարթ տրամադրություն ունեմ: Նա առհասարակ շատ էր բաց պահում իր դուռը: Քիչ կպատահեր, որ մարդու մերժեր՝ ներս չթողներ: Պատվիրել էր, որ խնդրատուներին ներս թողնեին առանց արգելքի: Խոսելու ժամանակ մին էլ տեսանք՝ մի փոքրիկ, այսպես 10-11 տարեկան գիմնագիստ ներս մտավ, գլուխն արագ տմբացրեց, չարաճճի գլուխ տվեց ու դիք կանգնեց դռան տակին:

Հայրիկի քեֆն ավելի բացվեց:

Օ՛հ, բարով եկար, ասավ, ի՞նչ կուզես:

Հայրի՛կ, ինձ ուսումնարանից դուրս են անում:

Քեզի, ուսումնարանեն դուրս կանե՞ն:

Այո՛, Հայրի՛կ:

Ինչպե՞ս կարելի է, որ քեզի դուրս անեն:

Դուրս են անում, Հայրի՛կ:

Ո՞վ է դուրս անում:

Դիրեկտորը:

Ինչու՞:

Ասում է՝ փողը բեր:

Է՛հ, դու ալ չունի՞ս:

Չէ՛, Հայրիկ, իմ հայրը մեռած է, մայրս . . . Երեխան սկսեց իր պատմությունը:

Մոտ եկ, տեսնեմ:

Երեխան մոտեցավ:

Է՛հ, հետո լավ կտվորի՞ս դասերդ:

Լավ են սովորում, Հայրիկ, և երեխան նորից սկսեց մի պատմություն, թե ինքն ինչ առարկայից ինչ է ստացել և այլն:

Լա՛վ, լա՛վ, դու ալ Հայրիկի պես շատախոս եղեր ես: Հապա չըսի՞ր, որ կերթամ Հայրիկին կրսեմ:

Ասեցի, Հայրիկ:

Լավ ըրեր ես: Ինչքա՞ն կուզեն:

Չեմ հիշում ինչքան ասավ երեխան, Հայրիկը ձեռքը տարավ կողքին դրած բանի տակը, փողը հանեց, տվեց իրեն ու զանգահարեց: Ներս մտավ վարդապետը:

Ծո՛, տարեք նշանակեցեք, որ ասոր ուսման վճարը Հայրիկը պիտի տա, որ դիրեկտոր ալ չարձակի ուսումնարանեն . . . Սրան տարան: Ներս մտավ մի գաղթական կին, սկերում փաթաթված:

Հայրի՛կ, ամուսինս սպանվեց կոտորածին, հինգ երեխայով մնացեր եմ դռները . . .

Հա՛, խեղճ կին, այնպես ժամանակներ են, որ տղամարդիկ ալ հագիվ իրենց տունը կպահեն, դու մի խեղճ կնիկ, ինչպե՞ս պիտի պահես ատքան երեխաները:

Կրկին ձեռքը տարավ <կողքին դրած> բանի տակը, հանեց սրան էլ փող տվեց . ճամփա դրավ:

Ներս մտավ իմ ծանոթ ծերունի տիրացուն:

Հայրիկ, 40 տարի Ս . Մինասի եկեղեցում, սուրբ տաճարում ծառայել եմ աստծուն, այժմ քաղցած եմ . . .

Անխելք մարդ, ընդհատեց Հայրիկը, քեզի ո՞վ ըսավ 40 տ<արի> աստծուն ծառայես, որ այսօր քաղցած մնաս, 40 տ<արի> եթե մի վաճ<առականի> ծառայեիր, այսօր կուշտ պիտի ըլլայիր . . . ու սկսեց ծիծաղել: Է՛հ, աղեկ,

Կհոզանք:

Կրկին ձեռքը տարավ կողքի բանի տակից փող հանեց, տվեց իրեն ու  
զանգահարեց: Եկան:

Ծո՛, տարեք, ըսեք ասոր թոշակ կապեն:

Եվ այսպես ամբողջ օրը: